«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/10.10

ք. Կապան «20» փետրվար 2023թ.

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ասատուր Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2170400 (երկու միլիոն հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ

հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
« Կապանի բժշկական կենտրոն » ՓԲԸ	«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
Սյունիք Կապան Մ.Աստեփանյան 13	Հասցե՝ ք.Երևան,Օհանով փ 15/1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ	Բանկ՝«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 09420382	ՀՎՀՀ 01222567
Տնօրեն Ասատուր Ասատրյան	Տնօրեն Ա.Ասատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«20» փետրվար 2023 թ. կնքված
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/10.10 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հերթական նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
20	33141100/1	Բժշկական պորտասեղմիչ №1	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Պորտի սեղմիչ-մեկանգամյա օգտագործման , պլաստմասե, ստերիլ:	հատ	32	32000	1000	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի հասցեով	Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում Մինչև 30.12.2023թ
28	33141110/2	Գիպսակապ բժշկական 3մ x 20սմ	Եվրոմեդ	Գիպսակապ բժշկական 3մx20սմ- Ֆորմատ 3մx20սմ: Ֆորմատ- հատ: «պահել չոր տեղում»:	հատ	270	162000	600			
35	33141136/6	Կատետեր միզային 2-ճյուղանի G16	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 16Fr սիլիկոնապատ: Ֆորմատ- հատ:	հատ	196	98000	500			
36	33141136/7	Կատետեր միզային 2-ճյուղանի G18	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 18Fr սիլիկոնապատ: Ֆորմատ- հատ:	հատ	196	137200	700			
37	33141136/8	Կատետեր միզային 3-ճյուղանի G22	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Կատետեր միզային 3-ճյուղանի G-22	հատ	280	56000	200			

38	33141136/9	Կատետեր միզային 3-ճյուղանի G24	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ	Միզային կաթետր Ֆոլի եռաճյուղ 24Fr սիլիկոնապատ: Ֆորմատ- հատ:	հատ	280	56000	200			
39	33141138/1	Կանյուլյա քթի թթվածնային 200սմ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Քթի կանյուլա թթվածնային,պատրաստված է փափուկ, ատրավմատիկ PVC-ից: Խողովակի ներքին լուսանցքը խոնավանալուց կամ տաքանալուց չպետք է փակվի: Ամրացվում է ականջների վրայով: Հարմարավետ տեղադրվում է հիվանդի քթանցքների մեջ:	հատ	103.8	103800	1000			
47	33141142/8	Ներարկիչ "Ժանե" 60մլ	Եվրոմեդ	Ներարկիչ, 60մլ,նախատեսված է օրգանիզմից տարբեր տեսակի հեղուկներ արտածծելու, խոռոչները լվանալու համար, ինչպես նաև, հիվանդի օրգանիզմ զոնդի միջոցով հեղուկ, կերակուր կամ դեղորայք ներմղելու համար:	հատ	83	24900	300			
48	33141152/1	Ասեղ ողնուղեղային "Սպինոկան" G27 (4503902)	Բ.Բրաուն	Ասեղ ողնուղեղային անեսթեզիային համար Սպինոկան,կտրվածքը Կվինկեի,(4503902),չափը G-27 (մոխրագ.) 0,42 x 88мм 3 1/2;Ֆորմատը -հատ	հատ	395	39500	100			

49	33141152/2	Ասեղ ողնուղեղային "Սպինոկան" G26 (4502906)	Բ.Բրաուն	Ասեղ ողնուղեղային անեսթեզիային համար Սպինոկան,կտրվածքը Կվինկեի,((4502906) G-26 (շականակագույն) 0,47 x 88мм 3 1/2;Ֆորմատը -հատ	հատ	395	39500	100			
50	33141152/3	Ասեղ ողնուղեղային "Սպինոկան" G25 (4505905)	Բ.Բրաուն	Ասեղ ողնուղեղային անեսթեզիային համար Սպինոկան,կտրվածքը Կվինկեի,(4505905),չափը G-25 (նարնջ.) 0,53 x 88мм 3 1/2;Ֆորմատը -հատ	հատ	395	39500	100			
54	33141157/1	Նշտարի սայր 11 №100	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Շեղբ վիրահատական(նշտարի սայր)՝ N11 : Տուփում 100 հատ , չժանգոտվող մետաղից:	հատ	18	9000	500			
55	33141157/2	Նշտարի սայր 15 №100	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Շեղբ վիրահատական(նշտարի սայր)՝ N15 : Տուփում 100 հատ , չժանգոտվող մետաղից:	հատ	18	9000	500			
56	33141157/3	Նշտարի սայր 22 №100	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Շեղբ վիրահատական(նշտարի սայր)՝ N22 : Տուփում 100 հատ , ստերիլ,չժանգոտվող մետաղից:	հատ	18	9000	500			
57	33141157/4	Նշտարի սայր 23 №100	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Շեղբ վիրահատական(նշտարի սայր)՝ N23 : Տուփում 100 հատ , չժանգոտվող մետաղից:	հատ	18	9000	500			

58	33141178/1	Լուծույթների փոխներարկման ինֆուզիոն հավաքածու №1	ՍՄՏ Բեստ	Համակարգ ֆիլտրեվ հեղուկների ներարկման համար	հատ	42	840000	20000			
59	33141183/1	Զոնդ սնուցող չափսը 16	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Զոնդ սնուցող /կերակրման կաթետեր/՝ 16 Fr: Ֆորմատ-հատ: - <<պահել չոր տեղում>>	հատ	70	14000	200			
60	33141183/2	Զոնդ սնուցող չափսը 18	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Զոնդ սնուցող /կերակրման կաթետեր/ 18 Fr: Ֆորմատհատ: <<պահել չոր տեղում>>	հատ	70	14000	200			
61	33141211/1	Ապարանջան նորածինների №1	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Ապարանջան նորածինների №1	հատ	28	28000	1000			
62	33141211/2	Էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 6,5	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 6.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից,սիլիկոնապատ	հատ	200	10000	50			
63	33141211/3	Էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 7	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 7 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	200	20000	100			
64	33141211/4	Էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 7,5	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 7.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից,սիլիկոնապատ	հատ	200	40000	200			

65	33141211/5	Էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 8	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 8 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից,սիլիկոնապատ	հատ	200	20000	100			
69	33141211/9	Մեզընդունիչ 2լ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Մեզընդունիչ պարկ փականով: Ծավալը՝ 2000մլ : Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:	հատ	110	330000	3000			
72	33161220/1	Շպատել փայտե №100 մեծերի	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	Շպատել փայտե-երկարությունը՝ 150մմ, լայնությունը՝ 18մմ, ոչ ստերիլ, տուփում 100 հատ: Անվտանգությունը: Նշանադրումը-արտադրող երկրի և ֆիրմային նշանի առկայություն:Պայման ական նշանները- «պահել չոր տեղում»	հատ	3	30000	10000			

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

*Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով,

*Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:

*Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պետք է ներկայացնի նաև առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվություն:

*Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը

ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող ապրանքները հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող ապրանքները հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

* Որակի սերտիֆիկատների առկայություն

ԳՆՈՐԴ

« Կապանի բժշկական կենտրոն » ՓԲԸ
Սյունիք Կապան Մ.Ստեփանյան 13
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն Սասուր Սասունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Օհանով փ 15/1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն Ա.Սասունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 20 » փետրվար 2023 թ. կնքված
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/10.10 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
20	33141100/1	Բժշկական պորտասեղմիչ №1		8000	8000	16000	16000	16000	24000	24000	24000	32000	32000	32000	32000
28	33141110/2	Գիպսակապ բժշկական 3մ x 20սմ		40500	40500	81000	81000	81000	121500	121500	121500	162000	162000	162000	162000
35	33141136/6	Կատետեր միզային 2-ճյուղանի G16		24500	24500	49000	49000	49000	73500	73500	73500	98000	98000	98000	98000
36	33141136/7	Կատետեր միզային 2-ճյուղանի G18		34300	34300	68600	68600	68600	102900	102900	102900	137200	137200	137200	137200
37	33141136/8	Կատետեր միզային 3-ճյուղանի G22		14000	14000	28000	28000	28000	42000	42000	42000	56000	56000	56000	56000
38	33141136/9	Կատետեր միզային 3-ճյուղանի G24		14000	14000	28000	28000	28000	42000	42000	42000	56000	56000	56000	56000
39	33141138/1	Կանյուլյա քթի թթվածնային 200սմ		25950	25950	51900	51900	51900	77850	77850	77850	103800	103800	103800	103800
47	33141142/8	Ներարկիչ "Ժանե" 60մլ		6225	6225	12450	12450	12450	18675	18675	18675	24900	24900	24900	24900
48	33141152/1	Ասեղ ողնուղեղային "Սպինոկան" G27 (4503902)		9875	9875	19750	19750	19750	29625	29625	29625	39500	39500	39500	39500
49	33141152/2	Ասեղ ողնուղեղային "Սպինոկան" G26 (4502906)		9875	9875	19750	19750	19750	29625	29625	29625	39500	39500	39500	39500
50	33141152/3	Ասեղ ողնուղեղային "Սպինոկան" G25 (4505905)		9875	9875	19750	19750	19750	29625	29625	29625	39500	39500	39500	39500
54	33141157/1	Նշտարի սայր 11 №100		2250	2250	4500	4500	4500	6750	6750	6750	9000	9000	9000	9000
55	33141157/2	Նշտարի սայր 15 №100		2250	2250	4500	4500	4500	6750	6750	6750	9000	9000	9000	9000

56	33141157/3	Նշտարի սայր 22 №100		2250	2250	4500	4500	4500	6750	6750	6750	9000	9000	9000	9000
57	33141157/4	Նշտարի սայր 23 №100		2250	2250	4500	4500	4500	6750	6750	6750	9000	9000	9000	9000
58	33141178/1	Լուծույթների փոխներարկման ինֆուզիոն հավաքածու №1		210000	210000	420000	420000	420000	630000	630000	630000	840000	840000	840000	840000
59	33141183/1	Զոնդ սնուցող չափսը 16		3500	3500	7000	7000	7000	10500	10500	10500	14000	14000	14000	14000
60	33141183/2	Զոնդ սնուցող չափսը 18		3500	3500	7000	7000	7000	10500	10500	10500	14000	14000	14000	14000
61	33141211/1	Ապարանջան նորածինների №1		7000	7000	14000	14000	14000	21000	21000	21000	28000	28000	28000	28000
62	33141211/2	Էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 6,5		2500	2500	5000	5000	5000	7500	7500	7500	10000	10000	10000	10000
63	33141211/3	Էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 7		5000	5000	10000	10000	10000	15000	15000	15000	20000	20000	20000	20000
64	33141211/4	Էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 7,5		10000	10000	20000	20000	20000	30000	30000	30000	40000	40000	40000	40000
65	33141211/5	Էնդոտրախեալ խողովակ մանժետով չափսը 8		5000	5000	10000	10000	10000	15000	15000	15000	20000	20000	20000	20000
69	33141211/9	Մեզընդունիչ 2լ		82500	82500	165000	165000	165000	247500	247500	247500	330000	330000	330000	330000
72	33161220/1	Շպատել փայտե №100 մեծերի		7500	7500	15000	15000	15000	22500	22500	22500	30000	30000	30000	30000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

« Կապանի բժշկական կենտրոն » ՓԲԸ
Սյունիք Կապան Մ.Ստեփանյան 13
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն Ասատուր Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Օհանով փ 15/1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ